Վարդահովիտի հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ՆԶՊ և ԱԿ

Թեմա Զինվորական ողջույնի կատարումը զենքով և առանց զենքի, տեղում և շարժման ընթացքում

Ուսուցիչ՝ Ավագյան Վահե

Ղեկավար՝ Հովհաննիսյան Փափազ

Եղեգնաձոր 2023

Ներածություն

Նախքան թեմայի բովանդակությանը անցնելը խոսենք նախնական զինվորական պատրաստության առարկայի էության և խնդիրների մասին:

Առարկան

- Համառոտ գիտելիքներ է տալիս հայ ռազմարվեստի պատմության մասին
- Ծանոթացնում է զինվորական ծառայության այբուբենին
- Տալիս է անհրաժեշտ գիտելիքներ, ունակություններ և հմտություններ
- Զարգացնում է բարձր կամային հատկանիշներ՝ համարձակություն, տոկունություն, վստահություն սեփական ուժերի նկատմամբ
- Օգնում է արագ կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում:

<u>Զինվորական ողջույնը</u> զինվորական ծառայության մեջ ընկերական համա-

Խրմբվածության, բարեկրթության, փոխադարձ հարգանքի անբաժանելի կանոններից մեկն է:

Զինվորականները պարտավոր են հանդիպելիս ողջունել միմյանց՝ պահպանելով ներքին ծառայության կանոնագրքով ու շարային կանոնադրությամբ սահմանված կանոնները:

Որպես կանոն առաջինը ողջունում են ենթակաները և զինվորական կոչումով կրտսեր զինծառայողները: Հավասար զինվորական կոչման դեպքում առաջինը ողջունում է նա ով ավելի բարեկիրթ է:

Պետի կամ կոչումով ավագի ողջունին (Ողջո՛ւն Ձեզ) շարքում կամ շարքից դուրս գտնվող զինծառայողները պատասխանում են՝ Ողջո՛ւն պարոն ... և նշում են զինվորական կոչումը:

Բացի միմյանց ողջունելուց, զինվորականները, որպես հարգանքի մատուցում ողջունում են նաև՝

- Հայաստանի Հանրապետության դրոշին (պաշտոնական արարողություն-ների ժամանակ),
- Զորամասի մարտական դրոշին,
- Անկախության համար մղված մարտերում զոհված զինծառայողների գե-րեզմաններին,
- Զինվորական հուղարկավորութան թափորին:

Հայաստանի Հանրապետության պետական օրհներգի կատարման ժամանակ

զինծառայողները պետք է ընդունեն ,,Զգաստ,, կեցվածք, իսկ եթե գլխարկով են՝ պետք է կատարեն զինվորական ողջույն (ձեռքը հպեն գլխանկին)՝ ինչպես սահմանված՝ շարային կանոնադրությամբ:

Զինվորական ողջույնի կատարումը զենքով և առանց զենքի, տեղում և շարժման ընթացքում:

Զինվորական ողջույնի կատարումը առանց զենքի

Զինվորական ողջույնը կատարվում է շարքում, շարքից դուրս, տեղում կանգնած և շարժման ժամանակ, ինչպես առանց զենքի այնպես էլ զենք կրելուց, գլխարկով և առանց գլխարկի:

Բոլոր դեպքերում զինվորական ողջույնը կատարվում է կտրուկ և ձգված, ճշտորեն պահպանելով շարային կեցվածքի ու շարժման կանոնները:

Տեղում կանգնած ժամանակ՝ շարքից դուրս, առանց գլխարկի զինվորական ողջույնի համար պետից /ավագից/ երեք-չորս քայլ հեռավորության վրա շրջվել պետի /ավագի/ կողմը, ընդունել շարային կեցվածք, նայել նրա դեմքին և գլուխը շրջել նրա շարժման ուղղությամբ:

Եթե զինծառայողը գլխարկով է, ապա, բացի դրանից, աջ ձեռքը ամենակարճ ճանապարհով մոտեցնել գլխարկին այնպես, որ մատները լինեն իրար կպած, ափը ուղիղ, միջնամատը քսվի գլխարկի ներքևի եզրին /հովարիկի մոտ/, իսկ արմունկը լինի ուսի բարձրությամբ, նույն գծի վրա: Գլուխը պետի /ավագի/ կողմը շրջելիս ձեռքի դիրքը գլխարկի մոտ մնում է անփոփոխ:



Երբ պետը /ավագը/ անցնում է ողջույնող զինծառայողի մոտից, վերջինս գլուխն ուղղում է՝ միաժամանակ իջեցնելով ձեռքը: (ՀՀ ԶՈՒ շարային կանոնադրություն հոդված 61, այսուհետ՝ ՀՀ ԶՈՒ ՇԿ):

<u>Զինվորական ողջույնի կատարումը շարժման ընթացքում:</u>

Շարքից դուրս առանց գլխարկի, շարժման ընթացքում զինվորական ողջույնի համար պետից /ավագից/ երեք-չորս քայլ հեռավորության վրա, ձախ ոտքը գետին դնելու հետ միաժամանակ դադարեցնել ձեռքերի շարժումները, գլուխը շրջել դեպի պետի կողմը, և շարունակելով քայլել , նայել նրա դեմքին: Պետի /ավագի/ մոտով անցնելուց հետո, ձախ ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը պահել ուղիղ, հայացքը դեպի առաջ և շարունակել ձեռքերի շարժումը:

Եթե զինծառայողը գլխարկով է, ապա ձախ ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը շրջել դեպի պետի /ավագի/ կողմը, դադարեցնել ձեռքերի շարժումները, աջ ձեռքը ամենակարճ ճանապարհով մոտեցնել գլխարկին այնպես, որ մատները լինեն իրար կպած, ափը ուղիղ, միջնամատը քսվի գլխարկի ներքևի եզրին /հովարիկի մոտ/, իսկ արմունկը լինի ուսի բարձրությամբ, նույն գծի վրա, ձախ ձեռքի ափը կիսաբռունցքով հպելով կողքին, հայացքով նայել նրա դեմքին:



Պետի /ավագի/ մոտով անցնելուց հետո, ձախ ոտքը գետին դնելու հետ միաժամանակ գլուխը պահել ուղիղ, հայացքը դեպի առաջ և շարունակել ձեռքերի շարժումը: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 62):

<u>Եթե պետն անցնում է մեքենայով</u>, զինծառայողը կանգնում է, շրջվում դեմքով դեպի պետի կողմը, ընդունում է շարային կեցվածք և ձեռքը հպում գլխարկին, եթե առանց գլխարկի է, ապա դեմքով շրջվում է դեպի պետը և ընդունում շարային կեցվածք: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 63):

<u>Զինվորական ողջույնի կատարումը շարքի մեջ</u>:

<u>Ջոկի շարքի</u> մեջ՝ տեղում զինվորական ողջույնի կատարման համար, երբ պետը մոտենում է 10-15 քայլ հեռավորության վրա, ջոկի հրամանատարը հրաման է տալիս՝

„Ջոկ, ԶԳԱ՛ՍՏ հավասարությունը դեպի ԱՋ

/դեպի ՁԱԽ, դեպի ԿԵՆՏՐՈՆ/„:

Ջոկի զինծառայողները ընդունում են շարային կեցվածք միաժամանակ գլուխները շրջում աջ/ձախ/ և հայացքով ուղեկցում են պետին:

Երբ պետը մոտենում է շարքի թիկունքի կողմից, ջոկի հրամանատարը ջոկին տալիս է ետդարձի, ապա՝ ողջույնի հրաման: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 96):

Վաշտի շարքի մեջ՝ տեղում զինվորական ողջույնի կատարման համար, երբ պետը գտնվում է 40-50 քայլ հեռավորության վրա, վաշտի հրամանատարը հրաման է տալիս՝

,,Վաշտ, ԶԳԱ՛ՍՏ հավասարությունը դեպի ԱՋ

/դեպի ՁԱԽ, դեպի ԿԵՆՏՐՈՆ/,,:

Այս հրամանով բոլորն ընդունում են շարային կեցվածք և գլուխները շրջում նշված կողմը, իսկ շարքում գտնվող վաշտի հրամանատարի տեղակալները, դասակի հրամանատարները և ավագ տեխնիկն ու վաշտի ավագը, բացի դրանից, ձեռքը մոտեցնում են գլխարկին:

Վաշտի հրամանատարը, հրաման տալով, ձեռքը մոտեցնում է գլխարկին, շարային քայլով մոտենում պետին, կանգնում նրա դիմաց երկու-երեք քայլ հեռավորության վրա և զեկուցում է՝

,,Պարոն մայոր, առաջին վաշտը զբաղված է այս-այս դործով:

Վաշտի հրամանատար՝ կապիտան Սիմոնյան,,:

Ավարտելով զեկույցը, վաշտի հրամանատարը, ձեռքը չիջեցնելով գլխարկի մոտից, մի քայլ գնում է ձախ / աջ /, միաժամանակ կատարելով աջդարձ /ձախդարձ/, գլուխը

թեքում է պետի կողմը , և պետին թողնելով առաջ, մեկ երկու քայլ հեռավորության վրա հետևում է նրան՝ քայլելով շարքի արտաքին կողմով:

Պետի ողջույնին վաշտի անձնակազմը պատասխանում է ..ՈՂՋՈՒՅՆ պարոհ մայոր..:

Պետի անցնելուն պես կամ նրա ..ԱՋԱՏ,, հրամանով վաշտի հրամանատարը հրաման է տալիս ..ԱՋԱՏ,, և ձեռքն իջեցնում ցած: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 123):

Շարքում՝ շարժման ընթացքում, զինվորական ողջույնը կատարվում է այնպես, ինչպես նշված է ջոկի և դասակի համար: Ընդ որում վաշտի հրամանատարի տեղակալները, դասակի հրամանատարները, ավագ տեխնիկը և վաշտի ավագը ձեռքը մոտեցնում են գլխարկին:

Եթե պետը առաջ է անցնում վաշտի շարասյունից, ապա ողջույնի հրաման չի տրվում: Այս դեպքում զինվորական ողջույն են կատարում միայն ստորաբաժանումների: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 124):

Զինվորական ողջույնի կատարումը զենքով

Զինվորական ողջույնը կատարվում է ինչպես առանց զենքի, այնպես էլ զենք կրելու ժամանակ: Կատարվում է ավտոմատ և կարաբին կրելու դեպքում:

Նախ պարզենք թէ ինչ է շարային կեցվածքը զենքով: Շարային կեցվածքը զենքով զինծառայողը ընդունվում է զենքը ,,Փոկին-Ա՛Ռ,, դրությամբ ,,Զգաստ,, կամ ,,Շարվիր,, հրամանով: Այդ հրամաններով զինծառայողը կանգնում է առանց լարվելու, ուղիղ, ոտնաթաթերը բացելով մեկ բռունցքի լայնությամբ և հավասարեցնելով ճակատային գծի հետ: Ծնկները պետք է լինեն ուղիղ, գլուղը բարձր պահած, կուրծքը և մարմինը՝ մի փոքր առաձ տրված: Փայտյա կոթով զենքը պահվում է փողաբերանը դեպի վեր: Ծալովի կոթով զենքի փողաբերանը պահվում է ներքև:

Զինվորական ողջույնի կատարումը զենքով տեղում ոչ շարժման ժամանակ

Շարքից դուրս զինվորական ողջույնը զենքով կատարվում է այնպես, ինչպես առանց զենքի, ընդ որում զենքի դիրքը չի փոխվում և ձեռքը գլխարկին չի մոտեցվում, բացառությամբ ավտոմատը ,,Մեջքին առ,, և կարաբինը ,,Ուսին առ,, դրությամբ: Այս դեպքում կարաբինը նախօրոք առնվում է ոտքի մոտ:

Երբ պետն անցնում է զինծառայողի մոտից, վերջինս գլուխն ուղղում է և իջեցնում ձեռքը: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 64):

Զինվորական ողջույնի կատարումը զենքով շարժման ժամանակ

Շարքից դուրս զենքով շարժման ժամանակ երբ զենքը գտնվում է ,,Փոկին առ,, և ,,Մեջքին առ,, դրությամբ, պետից երեք-չորս քայլ հեռավորության վրա ձախ ոտքը

գետին դնելու հետ միաժամանակ գլուխը թեքել պետի կողմը, դադարեցնել ազատ ձեռքի շարժումը:

Զենքը ,,Մեջքին առ,, դրության ժամանակ աջ ձեռքը ամենակարճ ճանապարհով մոտեցնել գլխարկին այնպես, որ մատները լինեն իրար կպած, ափը ուղիղ,



միջնամատը քսվի գլխարկի ներքևի եզրին /հովարիկի մոտ/, իսկ արմունկը լինի ուսի բարձրությամբ, նույն գծի վրա: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 65):

,,Ոտքին-ԱՌ,, դրությունից կարաբինով զինվորական ողջույնը կատարվում է՝

,,Աջից /ձախից, կենտրոնից/ դիմավորելու համար ՈՂՋՅՈՒՆԻՐ,,

Հրամանով, երկու գործողությամբ՝

Առաջին գործողություն՝ կարաբինը բարձրացնել աջ ձեռքով և բռնել կախված վիճակում՝ փողը պահելով կրծքի մեջտեղի դիմաց, նշանառողիկը դեպի իրեն, միաժամանակ ձախ ձեռքով բռնել կարաբինի փողակալից, /պահեստատուփի առջևի մասի վրա, բութ մատը նշանառողիկի տակ/, ձախ ձեռքի դաստակը պահել գոտու բարձրության վրա:

Երկրորդ գործողության կատարման հետ միաժամանակ գլուխը թեքել աջ /ձախ/ և պետին ուղեկցել հայացքով՝ նրա շարժման հետ գլուխը թեքելով: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 66):

Կարաբինը ,,ՈՂՋՅՈՒՆԻՐ,, դրությունից ,,Ոտքին – ԱՌ,, դրության է բերվում՝՝

,,Ոտքին – ԱՌ,, հրամանով:

Նախնական հրամանով գլուխը պահել ուղիղ, իսկ կատարողական հրամանով կարաբինը ոտքի մոտ բերել երեք գործողությամբ՝

Առաջին գործողություն՝ աջ ձեռքը տեղափոխել վերև և բռնել փողակալի ու փողի պահպանակի վերևի մասից:

Երկրորդ գործողություն՝ կարաբինը աջ ոտքի մոտ փոխադրել այնպես, որ խզակոթը հպվի ոտնաթաթին, ձախ ձեռքով բռնել սվինի փողից:

Երրորդ գործողություն՝ արագորեն իջեցնել ձախ ձեռքը, իսկ աջով կարաբինը սահուն իջեցնել գետին: (ՀՀ ԶՈՒ ՇԿ հոդված 67):

Կարաբինով ողջույնը կատարվում է միայն այն ժամանակ, երբ ստորաբաժանումներն ու զորամասերը գտնվում են տեղում՝ շարքի մեջ:

,,Աջից /ձախից, կենտրոնից/ դիմավորելու համար ՈՂՋՅՈՒՆԻՐ,, հրամանով կարաբինը վերցվում է ,,Ողջունիր,, դրության, շարքում գտնվող բոլոր զինծառայողները շարային կեցվածք են ընդունում, միաժամանակ գլուխը թեքում են պետի կողմը, հայացքով ուղեկցելով նրան: Եթե շարքում զինծառայողների մոտ կան ավտոմատներ, գնդացիրներ ու ձեռքի նռնակներ, դրանց դիրքը չի փոխվում:

<u>Զորամասերին և ստորաբաժանումներին զինվորական ողջույնի հրաման չի տրվում՝</u>

-Զորամասը կամ ստորաբաժանումը զգոնության, երթի, ինչպես նաև մարտավարական վարժանքների և վարժանքների ժամանակ բարձրացնելիս.

-Հրամանատարական կետերում, կապի կենտրոններում և մարտական հերթապահության վայրերում (մարտական ծառայություն).

-Կրակման գծում և կրակման (մեկնարկային) դիրքում կրակոցի (արձակումների) ժամանակ.

-Օդանավակայաններում թռիչքների ժամանակ;

-Շինարարության, կենցաղային կամ կրթական նպատակներով աշխատանքի, ինչպես նաև արհեստանոցներում, զբոսայգիներում, անգարներում, լաբորատորիաներում դասերի և աշխատանքի ժամանակ.

-Սպորտի և խաղերի ժամանակ;

-Ուտելիս և «Մաքուր» ազդանշանից հետո «Բարձրանալ» ազդանշանից հետո;

-Հիվանդների համար նախատեսված սենյակներում.

-Այս դեպքերում պետը կամ ավագը զեկուցում է միայն ժամանող պետին:

Օրինակ՝ «Պարոն մայոր. 2-րդ մոտոհրաձգային վաշտը կատարում է երկրորդ կրակային վարժանքը. վաշտի հրամանատարը կապիտան Սիմոնյանն է»:

-Սգո թափորին մասնակցող ստորաբաժանումները չեն կատարում զինվորական ողջույնը:

-Զորամասում անցկացվող հանդիսավոր ժողովների, համագումարների, ինչպես նաև ներկայացումների, համերգների և կինոթատրոնում զինվորական ողջույնի հրաման չի տրվում և հրամանատարին (պետին) չի զեկուցվում: Զինվորական ողջույնի համար անձնակազմի ընդհանուր ժողովների ժամանակ տրվում է «Զգաստ» կամ «Զգաստ կանգնել» հրամանը և զեկուցվում հրամանատարին (պետին):

Օրինակ՝ «Պարոն փոխգնդապետ, գումարտակի անձնակազմը ժամանել է ընդհանուր ժողով, գումարտակի շտաբի պետ, մայոր Կարապետյան»:

Երբ պետը կամ ավագը դիմում են առանձին զինծառայողների, նրանք, բացառությամբ հիվանդների, հանդես են գալիս զինվորական դիրքով և նշում իրենց պաշտոնը. Զինվորական կոչումը և ազգանունը: Ձեռքերը սեղմելիս ավագը նախ ձեռքը տալիս է: Եթե ավագը ձեռնոցներ չի կրում, կրտսերը ձեռքը սեղմելուց առաջ հանում է ձեռնոցը:

Պետի կամ ավագի ողջույնին («Ողջույն») շարքերում գտնվող կամ շարքից դուրս եկած բոլոր զինվորականները պատասխանում են. «Մաղթում ենք ձեզ քաջառողջություն». եթե պետը կամ ավագը հրաժեշտ են տալիս («Ցտեսություն, ընկերներ»), ապա զինվորականները պատասխանում են՝ «ցտեսություն»: Պատասխանի վերջում ավելացվում է «Պարոն» բառը և զինվորական կոչումը՝ չնշելով զորքի կամ ծառայության տեսակը:

Օրինակ՝ սերժանտներ, վարպետներ, և սպաներ՝ «Առողջություն ենք մաղթում, Պարոն կրտսեր սերժանտ», «Ցտեսություն, Պարոն լեյտենանտ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զինվորական ողջույն, դա զինծառայողների փոխադարձ հարգանքն է, զինծառայության մեջ գտնվող այլ աստիճանի պետերի և ՀՀ խորհրդանիշների նկատմամբ: Զինծառայողները պարտավոր են հանդիպելիս ողջունել միմյանց՝ պահպանելով ներքին ծառայության կանոնագրքով և շարային կանոնադրությամբ սահմանված կանոնները:

Որպես կանոն, պետերի և սովորական զինծառայողների հանդիպման ժամանակ առաջինը ողջունում են կոչումով ավելի կրտսերները, որպես հարգանքի ցուցաբերում: Հավասար կամ գրեթե հավասար զինծառայողների հանդիպման դեմքում բարևում է նա, ով ավելի բարեկիրք է:

Պետի կամ կոչումով ավագի ողջույնին (Ողջու՛յն ձեզ) շարքում կամ շարքից դուրս գտնվող զինվորները պատասպխանում են «Ողջու՛յն պարոն ...» և նշում նրա զինվորական կոչումը:

Զինվորները, որպես հարգանքի մատուցում ողջունում են նաև՝

- ՀՀ դրոշին
- Զորամասի մարտական դրոշին
- Հայ մարտիրոսներին
  - Զիվորական ողջույնը զիվորական ծառայության մեջ ընկերական համա-
  - Խրմբվածության, բարեկրթության, փոխադարձ հարգանքի անբաժանելի կանոններից մեկն է:
  - Զինվորականները պարտավոր են հանդիպելիս ողջյունել միմյանց՝ պահպանոլով ներքին ծառայության կանոնագրքով ու շարային կանոնադրությամբ սահմանված կանոնները:
  - Որպես կանոն առաջինը ողջյունում են ենթակաները և զինվորական կոչումով կրտսեր զինծառայողները: Հավասար զինվորական կոչման դեպքում առաջինը ողջյունում է նա ով ավելի բարեկիրթ է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

-Նախնական զինվորական պատրաստություն 8-րդ դասարան

- Նախնական զինվորական պատրաստություն 9-րդ դասարան

- Նախնական զինվորական պատրաստություն 10-րդ դասարան

- ՀՀ ՊՆ ԶՈՒ Շարային կանոնադրություն